

կարդալով Սիմէոն Լեհացոյ տողերը 1627ին տեղի ունեցած Եարոսլաւի հրդեհի, Լովի մահտարածամի եւ այս պատճառաւ իր փախստի մասին (էջ 381—382), որ եւ է տարակոյս չի մնար, թէ «եղկելի գրիչը» միայն Սիմէոն կրնայ ըլլալ: Փափագելի էր անշուշտ ունենալ այս Յիշատակարանս ամբողջութեամբ. ես յառաջ բերի այն միայն, ինչ հաղորդած էր Յ. Թօփնեան:

8. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՈՍԿԵՓՈՐԻԿԻ (1629)

«Արդ գրեցաւ գիրս ի թուականիս Հայոց ՌՉԸ. Սեպտ. ԺԵ. օրն շարաթ, ի յաշխարհս Ըողաց, ի ... քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ննջման սուրբ Աստուածածնին... ի կաթողիկոսութեան... տեառն տէր Մովսէսի... որ յայսմ ամի նստաւ յաջորդ յաթոռն Ս. Գրիգորի կամօքն Աստուծոյ եւ հաճութեամբ եւ ընտրութեամբ ամենայն Հայոց, եկեղեցականաց եւ աշխարհականաց. եւ ի թագաւորութեան Լեհաց Ջիկմունդին, զոր եւ այսմ ամի մեռաւ Շահ(Ա)պագն Պարսից եւ ի կենդանութեան նստոյց զթոռն իւր Շահ Սօֆի ժառանգ թագաւորութեան իւրոյ, զորդիսն ի բաց մերժելով: Բայց գրեցաւ գիրքս այս... Ոսկեփորիկ... ի խնդրոյ բարեմիտ եւ հեղահոգի գրասէր եւ ընթերցող միշտ իմաստուն եւ հանճարեղ ատն Աստուծոյ խոճայ Յովանէսին Ջուղայեցո եւ ճարտար հմուտ հազիմ ընտիր բժշկին, որ բազում յղճիւ եւ